


1 + 1

Կայք էջ՝ 1u1.am



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ԳՅՈՒՂԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԹԵՐԹ 27 ԱՊՐԻԼԻ 2021թ. թիվ 4 (25)

ՈՒՋՈՒՄ ԵՍ ԽՂՂՎՈՒՄԻՅՈՒՆ, ՊԱՏՐՎԱՏՎԻՐ ՊԱՏԵՐՎՁԱՒ

ՆՐԱՆՔ ՔԱՅԼԵՑԻՆ ԴԵՊԻ ԼՈՒՅՍԸ ՈՒ ՄԼԱՑԻՆ ԼՈՒՅՍԻ ՄԵՋ /ՍԵՎԱՆԻ ՀԵՐՈՍՆԵՐԸ/



Վահագն Գևորգյան Գրայիկի- ծնվել է Սևանի տարածաշրջանի Ծովագյուղ գյուղում, 2002 թվականի փետրվարի 9-ին: Դժվար մանկությունը նրան չի խանգարել, որպեսզի Մարդ մեծանա: Մանկական խաղերը անտեսելով միշտ օգնել է ծնողներին, որ իրենք նույնպես կարողանան ապրել քարաշեն տան մեջ:

Շատ աշխույժ էր, ոչ մի բանից չէր վախենում, թվում էր, թե չի հոգնում. նրա էներգիան անսպառ էր:

-Մեր տան խաղաղությունն էր, -ասում է եղբայրը:

Հանդուրժող, մեծերի խոսքը հարգող մարդկային արժեհամակարգով օժտված երիտասարդ էր: Շատ էր սիրում ծնողներին. մեծ հպարտությամբ էր խոսում հոր մասին, նախատում էր նրանց, ովքեր կծաղրեին որևէ աշխատանք: «Ես հպարտ եմ, որ կարողանում եմ օգուտ տալ մարդկանց», - ասում էր նա: Նրանք զբաղվում էին անասնապահությամբ:

Ծնողների զբաղվածության պատճառով քրոջ Լիլիթի խնամքը գրեթե մնացել էր Վահագնի ուներին, ով սիրով էր կարտարում իր վրա դրված պատասխանատվությունը: Խրատել, խորհուրդներ է տվել և, ամենակարևորը, քրոջը սովորեցրել է, որ ցանկացած դժվարություն պետք է հաղթահարել ժպտալով, քանի որ ժպիտը զեղեցկացնում և երկարեցնում է մարդու կյանքը:

Ծառայել է Ջաբրայիլում, որպես շարքային հրաձիգ: Վերջին անգամ զանգահարել է հոկտեմբերի 9-ին, Հաղորդից, հայտնվել են շրջափակման մեջ, բայց նա ծնողներին չի ասել, պարզապես հասցրել է նրանց հույսով ապրելու հերթական զանգը անել:

Ծառայակից ընկերները պատմում են, որ նա չի երկնչել, միացել է կամավորներին և պայքարել:

Հորաքրոջ տղան, ով նույնպես կամավոր է եղել, մեծ հիացմունքով և հպարտությամբ է խոսում նրա մասին, ավստում է, որ անկատար մնացին

նրա երազանքները և նպատակները, նույնիսկ չտեսավ եղբորը, ով իր գորակոչվելուց մեկ շաբաթ հետո էր վերադարձել ծառայությունից:

-Վահագնի զոհվելը մեծ կորուստ էր բոլորիս համար, - ասաց Հրանտ Մելոյանը, ով նրան կնքել էր «տայգա» մականունով՝ որպես աշխատասեր և պատասխանատու մարդու:

Ուսուցչուհին պատմեց, որ նա սիրում էր տեսրերի դարձերեսներին խաչեր նկարել, որոնք յուրահատուկ էին իրենց ոճով և ձևով: Կյանքի դժվարությունները նրան ավելի ուժեղ էին դարձնում, գրավոր աշխատանքները գրում էր շատ մաքուր, զեղեցիկ ձեռագրով և շատ ուշադիր, որ հանկարծ չսխալվի: Նրա կերպարը հային բնորոշ օրինակ էր: Նա մտածում և գործում էր որպես հասուն տղամարդ: Նա մեզ համար դարձավ «ուսուցիչ», քանի որ նրանից և նրա նմաններից շատ բան ունենք սովորելու:

Կարեն Շահինյանը ծնվել է 1998



թվականին: Բանակ զորակոչվելիս սկզբում ծառայությունը անցկացրել է Արմավիրում, այնուհետև տեղափոխվել է Կուբաթլու, իսկ պատերազմի ժամանակ եղել է Ջաբրայիլում: Նա տանկիստ էր: Հոկտեմբերի 2-ին ծանր վիրավորումից ստացել է գլխուղեղային կոնտուզիա. սկզբնական շրջանում նրան տեղափոխում են Խնձորեսկ, հետո՝ Սիսիանի հոսպիտալ: Բուժումներից հետո նրան ուղարկում են մայրական խնամքի, բայց նա շտապում էր հասնել ընկերներին: Նա չէր խոսում և չէր սիրում, որ իրեն զոհվում էին: Չինակից ընկերները պատմում էին, որ նա թշնամու 4 տանկ է խոցել: Թե՛ մարտերի ժամանակ պատերազմի դաշտում թողած տանկերից 4-ը առանց վախենալու հետ է բերում: Տեսնելով ընկերոջ Հակոբի տանկի այրվելը նա

առանց վարանելու նետվում է ընկերոջը և նրա տեխնիկան փրկելու:

Հնուտ տանկիստ-մեխանիկ էր. այդպես են նրան բնութագրում զինակից ընկերները: Պապի արժանի զավակն էր սիրում էր մեխանիկայով զբաղվել, շատ էր սիրում «Մաթեմատիկա» առարկան, մեծ սիրով մասնակցում էր մաթեմատիկական բոլոր մրցույթներին, լուցկու հատիկներով հավաքում էր մեքենաներ և եկեղեցիներ: Ավանդապաշտ էր, սիրում էր հին հայկական տոները և հաճախ էր իրեն տրամադրված սննդի/ բուժեօտի/ գումարը հավաքում, որ ընտանիքով պատշաճ ձևով դիմավորեն Ամանորը: Ամեն տարի տոնածառի նոր խաղալիք էր գնում, որպեսզի տարին սկսի նորովի և նոր երազանքներով:

Նրան «ճապոն» մականուն էին կնքել պապիկի ընկերները, քանի որ նա աչքի էր ընկնում աշխուժությամբ, հոգատարությամբ և խիզախությամբ:

Կոկիկ, մաքրասեր երիտասարդ էր, սիրում էր հագնել կոստյում և միշտ շեշտում էր, որ տղամարդը պետք է կոստյում հագնի, դա ավելի ազդեցիկ է դարձնում:

Սիրում էր մրցակցել: Նա միշտ ձգտում էր ցանկացած իրավիճակում ճիշտ և արդար մրցել:

Կարենը միշտ կրկնում էր. «Ես որ մեռնեմ, յուրաքանչյուրը ինձանից հետո պատմելու բան պետք է ունենա իր թռեներին»...

Վիգեն Քոչարյան Համլետի- ծնվել է Սևանի Սեմյոնովկա գյուղում: Բոլորը նրան հիշում են որպես արժանի զավակ և օրինապաշտ քաղաքացի: Ուսուցիչները նրա մասին չեն խոսում անցյալով, քանի որ զգում են նրա ներկայությունը և շունչը:

Դպրոցի տնօրեն տիկին Սարգսյանը և մյուս ուսուցիչները նրա մասին պատմում էին մեծ հիացմունքով՝ թերևս կոկորդում խեղդելով արցունքները:



Պատասխանատու և պարտաճանաչ երիտասարդ էր, գիտեր, թե ինչպես պետք է իրեն դրսևորի թե՛ մեծերի, թե՛ փոքրերի հետ շփվելիս: Շատ շուտ կարողանում էր կողմնորոշվել ցանկացած իրավիճակում: Սիրում էր ասումներ և գրքեր կարդալ: Դպրոցի բոլոր միջոցառումներին մասնակցում էր մեծ սիրով և պատասխանատվությամբ: Պարտում էր տարբեր ժանրի և տարբեր ազգերի պարեր, բայց նրա համար առաջնայինը հայկական պարն էր: Մաքրասեր էր, ժպտերես, կոփված բոլոր բնագավառներում: Սիրում էր խոհարարի գործը, և նրա մոտ դա շատ լավ էր ստացվում:

Մեծ ուրախությամբ էր խոսում, որ շուտով զորակոչվելու է բանակ: Ծառայել է Մատաղիսում, այնուհետև՝ Թալիշում, ստացել է խրախուսանքներ և պատվոգրեր: Ստացել էր կրտսեր սերժանտի կոչում:

-Կյանքով լի, աշխատասեր և բանիմաց, անվախ երիտասարդ էր, - այդպես էին նրան բնութագրել զինակից ընկերները:

Ընտանիքի անդամները՝ մայրը, պապը, տատը, նրա մասին չէին ցանկանում խոսել անցյալով և կարծես չէին ցանկանում հավատալ, որ նա այլևս չկա: Նրա մարմինը գտել են պատերազմից 100 օր անց: Նա կարողացել է խոցել թշնամու մի քանի տանկ և հենց այդ ժամանակ էլ զոհվել է:

Հայրենի երկրի սահմանները պաշտպանելիս հերոսաբար զոհվեցին նաև մեր թանկ ու քաջագուն մյուս այրերը՝ հավետ մնալով մեր գոյապայքարի պատմության փառավոր էջերում:

Ահա Սեւանի տարածքի հերոս նահատակները.

1. Արման Պողոսյան
2. Արման Գալստյան
3. Վարդան Կարապետյան
4. Փայլակ Ղազարյան
5. Արմեն Ենգիբարյան
6. Ղանթար Խաչատրյան
7. Հայկ Գասպարյան
8. Վիգեն Քոչարյան
9. Էդվարդ Հակոբյան
10. Արամ Սահակյան
11. Փայլակ Սահակյան
12. Հովիկ Վերանյան
13. Նվեր Հովսեփյան
14. Բաբկեն Մկրտումյան
15. Գևորգ Բաբայան
16. Հարություն Ռաֆայելյան
17. Արթուր Պողոսյան
18. Սարգիս Գևորգյան
19. Արթուր Կիրակոսյան
20. Լևոն Լևոնյան
21. Տիգրան Ղարիբյան
22. Արթուր Վիրաբյան
23. Գորիս Վարազյան
24. Ալիկ Պետրոսյան
25. Խաչիկ Խաչատրյան
26. Ռադիկ Թորոսյան
27. Վահագն Գևորգյան
28. Կարեն Շահինյան

ԱՆԽԱՐՀԸ ԵՎ ՄԵՆՔ

Աշխարհի գարգացած երկրներում G-20 ներկայացնում է 85% աշխարհի եկոնոմիկան և 75% աշխարհի առևտուրը:

1. Արգենտինա
2. Ավստրալիա
3. Բրազիլիա
4. Մեծ Բրիտանիա
5. Գերմանիա
6. Հնկաստան
7. Ինդոնեզիա
8. Իտալիա
9. Կանադա
10. Չինաստան
11. Ռուսաստան
12. Սաուդյան Արաբիա
13. Ամերիկա
14. Թուրքիա
15. Ֆրանսիա
16. Մեքսիկա
17. Հարավային Կորեա
18. Հարավային Աֆրիկայի երկրներ
19. Ճապոնիա
20. Միացյալ Եվրոպայի երկրներ

1. Արգենտինա- բնակչության թիվը՝ 45195777, բնակչության միջին խտությունը կազմում է 14,4 մարդ/կմ², համախառն արտադրանքը՝ 20481\$
2. Ավստրալիա-բնակչության թիվը՝ 25180200, բնակչության միջին խտությունը կազմում է 3,27 մարդ/կմ², համախառն արտադրանքը՝ 52726\$
3. Բրազիլիա- բնակչության թիվը՝ 207353391, բնակչության միջին խտությունը կազմում է 22 մարդ/կմ², համախառն արտադրանքը՝ 15337\$
4. Մեծ Բրիտանիա- բնակչության թիվը՝ 66273576, բնակչության միջին խտությունը կազմում է 271 մարդ/կմ², համախառն արտադրանքը՝ 48727\$
5. Գերմանիա- բնակչության թիվը՝ 83292400, բնակչության միջին խտությունը կազմում է 232,3 մարդ/կմ², համախառն արտադրանքը՝ 56226\$
6. Հնկաստան-բնակչության թիվը՝ 1384346000, բնակչության միջին խտությունը կազմում է 411,48 մարդ/կմ², համախառն արտադրանքը՝ 6284\$

7. Ինդոնեզիա - բնակչության թիվը՝ 266357297, բնակչության միջին խտությունը կազմում է 138,77 մարդ/կմ², համախառն արտադրանքը՝ 12483\$
8. Իտալիա-բնակչության թիվը՝ 60588366, բնակչության միջին խտությունը կազմում է 201,1 մարդ/կմ², համախառն արտադրանքը՝ 44161\$
9. Կանադա-բնակչության թիվը՝ 37602103, բնակչության միջին խտությունը կազմում է 3,76 մարդ/կմ², համախառն արտադրանքը՝ 51190\$
10. Չինաստան- բնակչության թիվը՝ 1404328611, բնակչության միջին խտությունը կազմում է 146,3 մարդ/կմ², համախառն արտադրանքը՝ 16709\$
11. Մեքսիկա- բնակչության թիվը՝ 128649565, բնակչության միջին խտությունը կազմում է 62 մարդ/կմ², համախառն արտադրանքը՝ 20583\$
12. Ռուսաստան - բնակչության թիվը՝ 146171015, բնակչության միջին խտությունը կազմում է 8,54 մարդ/կմ², համախառն արտադրանքը՝ 28184\$
13. Սաուդյան Արաբիա-բնակչության թիվը՝ 34218169, բնակչության միջին խտությունը կազմում է 15 մարդ/կմ², համախառն արտադրանքը՝ 49216\$
14. Ամերիկա-բնակչության թիվը՝ 331216157, բնակչության միջին խտությունը կազմում է 34,55 մարդ/կմ², համախառն արտադրանքը՝ 65253\$
15. Թուրքիա-բնակչության թիվը՝ 83154997, բնակչության միջին խտությունը կազմում է 104 մարդ/կմ², համախառն արտադրանքը՝ 29723\$
16. Ֆրանսիա-բնակչության թիվը՝ 67848156, բնակչության միջին խտությունը կազմում է 123 մարդ/կմ², համախառն արտադրանքը՝ 49799\$
17. Հարավային Կորեա-բնակչության թիվը՝ 51732586, բնակչության միջին խտությունը կազմում է 517 մարդ/կմ², համախառն արտադրանքը՝ 44573\$
18. Հարավային Աֆրիկայի երկրներ- բնակչության թիվը՝ 54956900, բնակչության միջին խտությունը կազմում է 41 մարդ/կմ², համախառն արտադրանքը կազմում է 13630\$
19. Ճապոնիա- բնակչության թիվը՝ 120900000, բնակչության միջին խտությունը կազմում է 333,1 մարդ/կմ², համախառն արտադրանքը՝ 43194\$

20. Եվրամիություն- բնակչության թիվը՝ 453007803, բնակչության միջին խտությունը կազմում է 106,9 մարդ/կմ², համախառն արտադրանքը՝ 42960\$

Եթե ուշադիր նայենք համախառն արտադրանքի թվերին, ապա կտեսնենք, որ պետությունները բաժանվում են արտադրող տեխնոլոգիական պետությունների և հունք արտադրող պետությունների:

1. Անգլիան
2. Գերմանիան
3. Կանադան
4. Իտալիան
5. Չինաստան
6. Ամերիկան
7. Թուրքիան
8. Ֆրանսիան
9. Հարավային Կորեան
10. Ճապոնիան
11. Եվրամիություն
12. Հնկաստան

Հունք արտահանող պետություններն են.

1. Արգենտինան
2. Ավստրալիան
3. Բրազիլիան
4. Ինդոնեզիան
5. Մեքսիկան
6. Ռուսաստան
7. Սաուդյան Արաբիան
8. Հարավային Աֆրիկայի երկրներ:



ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄՓՎ-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ԱՆԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Գեղարքունիքի ՄՓՎ աշխատանքային խումբը, կազմով Գեղարքունիքի ՄՓՎ ԲՊԲ պետ, փ/ծ մայր Եվելինա Խաչատրյան, Գեղարքունիքի ՄՓՎ ԵՎԿ ՕՅՀ ավագ Իրահանգիչ, փ/ծ մայր Արմեն Սիմոնյան, Գեղարքունիքի ՄՓՎ ԲՊԲ ավագ Իրահանգիչ, փ/ծ կապիտան Գարսևան Միրիքյան, ս/թ ապրիլի 20-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի Հայրավանք և Բերդկունք համայնքներում անցկացրել է վարժանք՝ «Ազդարարում, տարիանում, պատասպարում» թեմայով:

Մեր այցելից առաջ նշված համայնքների բնակչությունը նախորդ մարզպետարանի պաշտոնական ֆեյսբուքյան կայք-էջով իրազեկվել էր վերը նշված թեմայով վարժանքներ իրականացնելու վերաբերյալ:

Առաջինը այցելեցինք Հայրավանքի համայնքապետարան, որտեղ քննարկումներ ունեցանք ԱԻ և ԲՊ ոլորտներին առնչվող թեմաներով: Խոսեցինք համայնքի պաշտպանական կառույցներին բնակչության կցագրման, այդ պաշտպանական կառույցների մաքուր և պատրաստ վիճակում պահելու վերաբերյալ, ինչպես նաև համայնքում էլ. շջակներ ձեռք բերելու շուրջ:

Հաջորդիվ այցելեցինք Հայրավանքի միջնակարգ դպրոց, որտեղ ուսուցիչների հետ ԱԻ և ԲՊ ոլորտներին



ին առնչվող թեմաներով քննարկումներ ունեցանք, մասնավորապես՝ գրուցեցինք դպրոցի քաղաքապետարանում, աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պլանների պարբերաբար ճշգրտում և Գեղարքունիքի ՄՓՎ պետի համաձայնեցմանը ներկայացնելու ընթացակարգերի շուրջ, որից հետո անցկացրեցինք «Ազդարարում,

տարիանում, պատասպարում» թեմայով սեմինար-պարանում և գործնական վարժանք՝ աշակերտական և ուսուցչական կազմի մասնակցությամբ: Ինտերակտիվ մեթոդի կիրառմամբ՝ հարցադրումների, երկխոսությունների և քննարկումների միջոցով, նախ պարզեցինք աշակերտների գիտելիքների, ունակությունների շրջանակը՝ կապված ԱԻ և ԲՊ ոլորտների հետ, այնուհետև իրականացրեցինք վարժանքի գործնական մասը, այն է՝ աշակերտների ազդարարումը, տարիանում և պատասպարումը, որն էլ հաջողությամբ և բավականին օպերատիվ կերպով իրականացվեց: Վարժանքի ավարտից հետո քննարկումներ ունեցանք ընթացքում թույլ տրված բացթողումների, թերությունների, դրանց շտկման ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումներ իրականացնելու շուրջ և վերջում հանդես եկանք ամփոփիչ խոսքով:

Մեր հաջորդ այցը Բերդկունք համայնքում էր, որտեղ ևս քննարկեցինք ԱԻ և ԲՊ ոլորտներին առնչվող հարցեր, մասնավորապես՝ համայնքի պաշտպանական կառույցներին բնակչության կցագրման, այդ պաշտպանական կառույցները մաքուր և պատրաստ վիճակում պահելու վերաբերյալ: Քննարկում ունեցանք նաև համայնքում էլ. շջակներ ձեռք բերելու շուրջ:

ԻՆՉԻ՞Ց ԵՆՔ ՎԱՆԵՆՈՒՄ ԵՎ ԻՆՉՈՒ՞

Այսօր կխոսենք մի պարապմունքի մասին, որտեղ քննարկվում էր «վախը»:

Երբեմն ես օգնում եմ իմ ուսուցչին, ով իր ազատ ժամանակն անցկացնում է սեմինարներ այն մարդկանց հետ, ովքեր ունեն «վախի» խնդիր:

Հետաքրքիր է, բայց նաև փաստ է, որ մենք շատ նման ենք միմյանց, և բոլորս ունենք ընդհանուր խնդիրներ և ֆոբիաներ / վախեր/:

-«Ա»- ուզում է թողնել կարիերան, որը ձեռք է բերել 15 տարվա քարտնաջան աշխատանքով և ուզում է դառնալ դերասան:

-«Բ»-դերասան է, բայց ուզում է հասկանալ, թե ինչու է միշտ խուսափում, որ չգնա լսումների:

-«Գ»- ուզում է բաժանվել ամուսնուց 15 տարի համատեղ կյանքից հետո:

-«Դ»- ուզում է չվախենալ ծերանալուց, քանի որ դեռ 30 տարեկան է:

-«Ե»- երազում է զբաղվել բիզնեսով, բայց վախք թույլ չի տալիս:

-«Զ»- չի հասկանում ինչու է իրեն այդքան դժբախտ զգում:

-«Է»- վախենում է մնալ անզոր:

-«Ը»- վախենում է, որ իրեն կներժեն:

Այս սեմինար-քննարկումները կրկնվում են նորից ու նորից: Դուք կարող եք հարցնել վախերը տարբեր են, ի՞նչն է նրանց միավորում այս թեման քննարկելիս: Երբ խորանում ենք նրանց բնույթի մեջ և ուսումնասիրում պատճառները, տեսնում ենք, որ նրանք տարբեր են:

Վախի տեսակները կարելի է պայմանականորեն բաժանել երեք մակարդակի:

Մակարդակ 1- այս մակարդակը լինում է երկու տեսակ վախ գործողությունից առաջ և վախ այն բանի համար, որ պետք է լինի:

Վախ գործողությունից առաջ:	Վախ այն բանի համար, որ պետք է լինի	Վախ- լինել խաբված Վախ- լինել անօգնական Վախ – չստանալ համաձայնություն Վախ –կորցնել կերպարը /իմիջ/
Վախ-սովորել ինչ-որ նոր բան Վախ- կայացնել որոշում Վախ -աշխատանքը փոխելու Վախ-ընկերություն անելուց Վախ- խզել հարաբերությունները Վախ- բժշկից Վախ- կարծիք հայտնել. Վախ- դիտարկ պահել Վախ- սխալվելուց	Վախ- ծերանալուց Վախ- դառնալ հաշմանդամ Վախ-դառնալ թռչակառու Վախ –մենակ մնալ Վախ-երեխաների մեծանալուց Վախ- աղքատանալուց Վախ- մահից Վախ- պատերազմից Վախ- հիվանդությունից Վախ- պատահարներից/դեպքերից/	
Վախ- լինել մերժված Վախ- հաջողության հանդեպ Վախ – լինել պարտված Վախ –լինել խոցելի		

